

ԿԱՐԼ ՄԱՐԲՍԸ ԵՒ ՄԱՐԲՍԻԶՄԸ *)

I

Մարքսի կեանքը, սոցիալ-քաղաքական, հրապարակախօսական գործունէութիւնը եւ զբաղման վաստակները:

Segui il tuo corso e lascia dir le genti!

Հետեւիր ճանապարհիդ, և թող մարդիկ խօսեն, ինչ ուզում են:

Դանտէ:

7.

Մարքսի յեղափոխական գործունէութիւնը.—Նրա տակտիկան.—Դատական պրօցես Մարքսի դէմ և նրա տուած իրաւաբանական-փիլիսոփայական բացատրութիւնները.—Ընդհանուր ընդհանրացման ցամաքային ներդրում.—Յեղափոխականների էմիգրացիան.—Մարքսն ու Էնգելսը Լոնդոնում, նրանց նոր օրգանը.—Մարքս-Էնգելսի պատմական տեսութիւնը յեղափոխութեան մասին.—Մարքսի աշխատութիւնը՝ «Դասակարգային կռիւները Ֆրանսիայում».—Պատճառների բացատրութիւնը մատերիալիստական տեսակէտով:

Մեր անցեալ յօդուածի վերջին գլխում համառօտ ուրուագծեցինք Մարքսի հրապարակախօսական գործունէութիւնը 48—49 թուականներին, յաճախ նմուշներ բերելով նրա շանթահարող յօդուածներից, փայլուն տաղանդի լիարժէք արդիւնքներից: Մենք շատ տեղեր դիտաւորութեամբ ենք իրան՝ Մարքսին խօսեցնում, իր սեփական լեզուով, որպէսզի նրա ուժեղ արտայտութիւններից ու սուր, կծու ոճից որոշ գաղափար կազմէ ընթերցողը, որպէսզի չնսեմանայ նրա մտքերի թափն ու ներգործութիւնը:

Մարքսը չէր բաւականանում միայն իր թերթի էջերում

*) Տե՛ս «Մուրճ» № 1 և 2.

ներքին ու արտաքին քաղաքական խոշոր երևոյթների վերլուծութեամբ և ծանրակշիռ խնդիրների քննադատական լուսաբանութեամբ: Մարքսը յեղափոխական հրապարակախօս էր— խօսքիս լաւագոյն իմաստով, Հոննոսեան յառաջադէմ ու քաղաքակիրթ երկրի ծոցում ծնուած դաւակը մաշում էր այժմ իր յեղափոխականացած հայրենիքում իր երիտասարդութեան ամենավառվռուն բոլէշները:

Հոննոսեան երկիրը դարձել էր կոմունիստների և դեմօկրատների մի կենտրոն. և այդ նոյն կենտրոնում գործուէութեան ղեկավար դերը ծանրացել էր Մարքսի վրայ: Կոմունիստներն էին, ամենից առաջ Մարքսը, որոնք իրանց գաղափարական բարձրութեան վրայ կանգնած ամենամեծ աշակցութիւնն էին ցոյց տալիս գերմանական բռնկուած յեղափոխութեան: Միայն Գեռնում ամբողջ դեմոկրատիան (պրօլետարական) ունէր երեք մեծ խմբեր, որոնց բոլոր հոգան ու գործնական աշխատանքը կազմում էր յեղափոխութեան յաջող պոսակման գարի տալը:

Յեղափոխական ուժեղ ու անդադար պրոպագանդը համարուել է «Neue Rheinische Zeitung»-ի ամենաէական դերերից մէկը:

Ինչկեր-աբսուլիտիստական պետական ըէփմի անհետ խորտակումը և միակզմ ու միաձոյլ Գերմանիայի վերականգնումը՝ «կարմիր հասարակապետութեամբ»—կազմել է շարունակ հազարաւոր մարդկանցից բաղկացած այն ոգեւորուած ժողովների հրապարակական, բարձրակոչ լողունը, ուր այնքան յաճախ խօսում էին Մարքսը, Էնգելսը, Վիլհելմ Վոլֆը, Շապերը և մի վառվռուն ու կրակոտ ագիդատոր Դիւսելդորֆից-Ֆերդինանդ Լասալը:

Յեղափոխութիւն in Permanenz—դա էր բանուորական դեմոկրատիայի մերձաւոր նպատակակէտը. այսինքն մի յամառ ու արմատական յեղափոխութիւն, որով փաստապէս իրականանայ յեղափոխութեան մասնակցող ամենայառաջադէմ ու ծայրայեղ կուսակցութեան ծրագրային մինիմումը:

Իսկ այդ օրինակ թափ ու ներգործութիւն ունեցող յեղափոխական շարժումը անկարելի էր գլուխ բերել լիբերալների և բուրժուական դեմոկրատիայի մեղմ ու չափաւոր խորհուրդներով, այլ անհրաժեշտ էր նակատ առ ճակատ կոչու մղել, յեղափոխական ցոյցեր անել, դիմել զինուած ապստամբութեան. պէտք էր ջլատել ադմինիստրացիայի ոյժը, անգործութեան մատնել պետական վարչական մեխանիզմը, յեղափոխականացնել զօրքը և գրաւել մասսայի կողմը. անհրաժեշտ էր ձը-

գել ու սնանկացնել պետական ֆինանսական ոյժը, իսկ դրա համար կարևոր էր ամենից առաջ, որ ամբողջ ազգաբնակչութիւնը հրաժարուէր հարկեր ու տուրքեր վճարելուց և անպարտելի դիմադրութիւն ցոյց տար կառավարութեան:—Ահա այսպիսի կոչ էր ուղղում Մարքսի օրգանը, շարունակ յորդորելով ժողովրդին, մանաւանդ բանուորութեան, ոտի ելնելու և յանուն իր ազատագրութեան՝ կործանելու ինքնակալ միապետութեան բռնակալ ըէժիմը:

Գերմանիայի 1848 թուականը Ռուսաստանի 1905—1906 թուականն է, ուստի հասկանայի է, թէ ինչու մեծ ուսուցչի՝ Կարլ Մարքսի, քաղաքական այս դաւանանքը, յեղափոխական ազդանշանն ու կռուի մեթոդը իրենց մնայուն արժէքով ու հարադատութեամբ ժառանգել և գործադրում է այժմ համառուսական կեանքի ամենաարմատական և իսկական յեղափոխական կուսակցութիւնը—սոցիալ-դեմոկրատիան համայն Ռուսաստանի:

Մարքսը ունէր մի հեռատես ու խելամիտ տակտիկա—բոլորովին խուսափել պարաիզանական կռուից, զգուշացնել յեղափոխական ակտիւ ոյժերին ապստամբութիւնից ամեն ղէպքում, երբ ամբողջ երկրում, մանաւանդ երբ երկրի կենտրոնական մասերում, կազմ ու պատրաստ չէ յեղափոխական բանակը, որպէսզի կարևոր ըրպէնքերին ապստամբութիւնը դառնար ընդհանուր ու կատարեալ, թշնամուն հասցրած հարուածը՝ ներգործիչ ու մահացու ինքը՝ յեղափոխական կռիւը ըստ ինքեան մի արուեստ է, որին ձեռնարկելն ու յաջողութեամբ պսակելու ջանքերը պէտք է պայմանաւորուած լինեն բոլոր պարագաների սւսուցմասիրութեամբ ու նախատես կշռադատութեամբ: Պէտք է քննել ու չափել ըէալ ոյժերի յարաբերութիւնները. պէտք է ուշադրութեամբ դիտել ու չափել թշնամու ոյժն ու կարողութիւնը և ունենալ նոյնիսկ բաւարար շանսեր ձեռնարկած յեղափոխական ակցիօնի յաջող ելքի նկատմամբ: Իւրաքանչիւր սոհեռատես ու սխալ քայլ յեղափոխական կռուի ընթացքում, կարող է խոշոր միասակար հետեանքներ բերել իր հետ:

Երբ Վիեննայում կրկին բռնկուած է յեղափոխութիւնը՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին «Neue Rheinische Zeitung» գործում է հետեակալէպիլոզը (վերջաբանը) «Այժմ խաղացուեց Վիեննայում այն դրամայի երկրորդ գործողութիւնը, որի առաջին գործողութիւնը խաղացուեց Փարիզում «Յունիսեան օրեր» անունով: Փարիզում՝ ոտքի կանգնած զօրքը, Վիեննայում՝ կրօսատները—երկու տեղն էլ վիճուած ու կաշառուած մուրացիկ պրոլետարիատը դուրս է բերուած աշխատաւոր ու մտածող պրո-

լեռարիատի դէմ: Շուտով կը տեսնենք մենք Բերլինում դրամայի երրորդ գործողութիւնը:²⁶⁾

Եւ հէնց որ Բերլինում գումարուած ժողովը վերջապէս վճռում է մերժել հարկատուութիւնը, Քեօլնի դեմոկրատական յանձնաժողովը՝ Մարբսի, Շապերի և Շնայդերի ստորագրութեամբ մի թուղցիկ է բաց թողնում, ուր պահանջում է ժողովրդից զինուած գիմադրել հարկահաններին, եթէ նրանք ոյժ գործ դնեն. կազմակերպել ու զինել ազգաբնակութեան. չունեւորներին զէնք ու պաշար հայթհայթել համայնքի հաշուով և կազմ ու պատրաստ դուրս ելնել թշնամու առաջ:

Այդ թուղցիկի համար Մարբսը և իր ընկերները դատին ենթարկուում 1849 թ. փետրուարի 9-ին Քեօլնում: Դեռ այսօր էլ խոր հիացմունք են պատճառում այն բացատրութիւնները, որ տուել է Մարբսը դատաստանական ատեանի առաջ: Նա դատուում էր հին, նախայեղափոխական շրջանում (1848 թ. ապրիլի 6 և 8-ին), ֆէօդալ-իւնկերական լանտագի (պարլամենտ) մէջ ժշակուած օրէնքով: Մարբսը բողոքում է դրա դէմ և իրաւաբանական-փրփոսփայական բացատրութեամբ ապացուցանում, որ հին ֆէօդալական հասարակութեան յօրինած օրէնքը չի կարող երբէք կենսական արժէք ունենալ մօղերն բիւրդերական հասարակութեան համար, որի կամքի և ոյժի իրական արտայայտութիւնը հէնց ինքը յեղափոխութիւնն է: Իրաւաբանական ֆանտազիայի արդիւնք է միանգամայն, կարծել, որ հասարակութիւնը կը թնում, խարսխում է օրէնքի վրայ. ընդհակառակը, ինքը օրէնքն է հիմնուած հասարակութեան վրայ. օրէնքը պէտք է հասարակական մարմնի համայնական, նրա նիւթական արդիւնաբերութեան ժամանակակից եղանակից առաջացած շահերի ու կարիքների արտայայտութիւնը լինի՝ ընդդէմ առանձին անհատների կամայականութեան: Օրինակ Նապոլէօնի կողքերը չէ, որ արաադրել է արդի բիւրդերական հասարակութիւնը, այլ 18-րդ դարում ծնունդ առած և 19-րդ դարում զարգացած բիւրդերական հասարակութիւնը դառնում էր այդ կողքերի մէջ օրինական արաայայտութիւններ: Հէնց որ նա չհամապատասխանեց այլևս հասարակական յարաբերութիւններին, պէտք է դառնայ կենսազուրկ թղթերի մի կոյտ:

«Սա քաղաքական կոնֆլիկտ չէ—ասում է Մարբսը, շօշափելով հին ու նոր հասարակութիւնների հակառակ յարաբերա-

²⁶⁾ Fr. Mehring. «Die Geschichte der deutschen Sozialdemokratie» հատ. II, էր. 126

կան կողմերը—առաջացած միեմոյն հասարակութեան երկու ֆրակցիաների մէջ. սա կոնֆլիկտ է երկու տարրեր հասարակութիւնների մէջ. մի սոցիալական կոնֆլիկտ, որ ստացել է քաքաքական կազմաւորում: Սա մի կռիւ է հին ֆէօդալ-բիւրոկրատական հասարակութեան և նորագոյն բիւրգեւական հասարակութեան մէջ. կռիւ ազատ մրցութեան և կղզիացած կաստայականութեան մէջ. կռիւ կալուածատէր հասարակութեան և ինդուստրիայի տէր հասարակութեան մէջ. կռիւ հաւատի (կրօնական) հասարակութեան և գիտութեան հասարակութեան մէջ: ²⁷⁾

Այս և սրա նման շատ իրաւարանական-փիլիսոփայական քննադատական բացատրութիւններ է տալիս Մարքսը դատարանական ատեանի առաջ, որոնք իրանց պատմական արժէքով և հասարակական նշանակութեամբ միշտ և ամենուրեք արժանի են յիշատակութեան:

Այդ բացատրութիւններից յետոյ Մարքսը իր ընկերներով ազատուում են դատարանից:

Շուտով այլ ընթացք է ստանում Մարքսի կեանքի անիւր: 1849 թուականի կէսից սկսած վրայ է հասնում ցամաքային Եւրոպայում մի ընդհանուր, ուժեղ ըէակցիա: Յեղափոխութիւնը դեռ չէր յանգել իր վախճանին, նա ճնշուեց, խեղդուեց իր զարգացման միջին ֆազիսի մէջ: Գերմանիայում աւելի, քան այլուր, բուռն ընթացքով և անդիմադրելի ծաւալով թեւաւորուեց ըէակցիան. նա անմիջապէս դիմեց հալածանքի և տարագրութեան քաղաքականութեան, դուրս քշուեցին երկրից յեղափոխութեան բոլոր յայտնի թէ անյայտ ներկայացուցիչները: Նորից սկսուեց փախստական գաղթականների մի խիստ ուժեղ հոսանք—Գերմանիայից դէպի Շվէյցարիա, Ֆրանսիա և Անգլիա: Շուտով յայտնուեց, սակայն, որ հալածուածների և հայրենագործիների մշտական ապաստարանը—Շվէյցարիան—չէ հիւրընկալում այլևս իր ազատ ծոցում գերմանացի էմիգրանտներին: Այսպէս, պրուսական կառավարութիւնից տրուած հրահանգներից ճնշուած, ազատ Շվէյցարիայի կառավարութիւնը դուրս է անում երկրի սահմաններից 11000 գերմանացի փախստականների, որոնցից մեծագոյն մասը չուում է Ամերիկա, իսկ մնացածը՝ Անգլիա: Ֆրանսիան ևս հետևում է Շվէյցարիայի օրինակին: Մարքսը ազատ ապաստան չգտնելով Ֆրանսիայում, տեղափոխուում է Անգլիա և այնուհետև ընդմիշտ մնում

²⁷⁾ Ibid, էր. 131.

Լոնդոնում. շուտով դալիս են նրա մօտ էնգելսը և միւս յայտնի կոմունիստները:

Այդ թուականից սկսած արդէն Մարքսը թևակոխում է իր կեանքի մի այլ շրջանը:

1850 թուականի յունուար ամսից սկսած Մարքսն ու էնգելսը Լոնդոնից շարունակում են հրատարակել Համբուրգում «Neue Rheinische Zeitung» օրգանը, բայց ոչ որպէս օրաթերթ, այլ իբրև քաղաքական-տնտեսական ամսաթերթ, Այդ հանդէսից լոյս է տեսնում ընդամենը վեց համար:

Առաջին երեք համարների մէջ գետեղուած է գրեթէ բացառապէս այն քննադատական խորաթափանց վերլուծութիւնն, որ արել են Մարքսը ֆրանսիական յեղափոխութեան մասին, և էնգելսը՝ գերմանական անաջող ապստամբութիւնների մասին:

Նրանք, իբրև խորագէտ ընտրիստներ, օգն էին ցնդեցնում իլլիւզիօնիստների բոլոր վարդապետն յոյսերը, առանց, սակայն, խորասուզուելու անպտուղ պեսիմիզմի մէջ: Նրանք, իբրև խորագգաց յեղափոխականներ դիտուած, նշմարում էին իւրաքանչիւր կայծ, որ կարող է նորից բռնկեցնել յեղափոխական կրակը: Նրանք դեռ չէին հաւատում, որ յեղափոխութեան փոթորիկը բոլորովին սպառուել է:

Մարքսն ու էնգելսը փորձեցին ժամանակակից պատմութեան այդ բովանդակալից հատուածը—յեղափոխութեան շրջանը—պատմական մատերիալիզմի տեսակէտից հետազօտել և լուսարանել: Նրանք հրապարակ հանեցին դասակարգային կռուիւր իր ամբողջ մերկութեամբ, որի շուրջը պտտւում են ժամանակակից քաղաքական խոշոր երևոյթները: Էնգելսը քննութեան առնելով Գերմանիայի քաղաքական և հասարակական դարգացման աստիճանը, ցոյց է տալիս, թէ ինչու ձեռնարկած ապստամբութիւններն անաջող անցան, ինչու յեղափոխութիւնը լիժմեց Գերմանիայում:

Անհամեմատ կնճռոտ խնդիր է շօշափում և փարթամ ու մանուածապատ նիւթի հետ. գործ ունի Մարքսը յանձինս ֆրանսիական յեղափոխութեան: Վերջինս թւում էր իդէալիստ քաղաքագէտներին ու պատմաբաններին որպէս մի կատարեալ խառնափնթորութիւն, մի անլուծելի հանելուկ:

Այլ կերպ է հասկանում երևոյթը Կարլ Մարքսը: Ֆրանսիական յեղափոխութեան այդ շրջանի հետազօտութիւնը առաջին փորձն էր, որով Մարքսը պատմութեան այդ հատուածը պիտի վերլուծէր պատմական մատերիալիզմի տեսակէտից: «Կոմունիստական Մանիֆեստի» մէջ թէօրիան ուրուագծել էին մեծ կոմունիստներն իր ընդհանուր և հիմնական գծերով, մինչ-

դեռ այստեղ Մարքսը քննական լուսաբանութեան նիւթ է դարձնում կուտարուած կոնկրետ երեւոյթը իր ներքին պատճառակցութեամբ, այսինքն նա քաղաքական դէպքերի ու ակտերի ծագման բացառակի աղբիւրն որոնում է տնտեսական հողի վրայ:

Մարքսը ցոյց է տալիս այդ յօդուածների մէջ (որոնց ժողովածուն լոյս է տեսել 1895 թ. Էնգելսի հրատարակութեամբ և ներածութեամբ, կրելով՝ «Die Klassenkämpfe in Frankreich 1848 bis 1850» — «Դասակարգային կռիւները Ֆրանսիայում 1848-ից մինչև 1850 թ.» վերնագիրը) որ 1847 թուականին հղած համաշխարհային առևտրական ճգնաժամը (կրիզիս) կազմել է իսկական մայր աղբիւրը ֆրանսիական փետրուարեան մարտի յեղափոխութեան. յեղափոխութիւն, որ ուժեղ արձագանք տուաւ Վիեննայում, Միլանում, Բերլինում, Դրեզդենում և սասանեցրեց ամբողջ Եւրոպան մինչև ռուսական սահմանները: Սակայն 1848 թուականի կէսից սկսած հետդիւստէ ծաղկող և 1849—1850 թ. կատարեալ բարգաւաճման հասած ինդուստրիան և առևտրական-տնտեսական ընդհանուր յաջողութիւնը (պրոսպերիտետ) կրկին ոյժ ու կենդանութիւն ներշնչեց Եւրոպական թէակցիային և ամբապնդեց նրա տեղական գոյութեան հիմքերը: Մինչդեռ նոյն յօդուածների մէջ Մարքսը յոյս ու ակնկալութիւն է յայտնում, որ շուտով պիտի նորից հզօրանայ յեղափոխական էներգիան ցամաքային Եւրոպայում. նոյն ամասհանդէսի վերջին համարում, 1850 թ. աշնանը (հոկտեմբեր ամսին), Մարքսը նորից կշռադատելով տնտեսական ֆակտորների դարգացման ժամանակակից դրութիւնը, մի պատմական-քաղաքական տեսութեան մէջ ընդ միշտ «վերջ է տալիս այդ իլլիւզիաներին» և գալիս այն համոզմունքին, որ «մի նոր յեղափոխութիւն հնարաւոր է միայն մի նոր կրիզիսի շնորհիւ: Բայց նրա գալուստը նոյնքան ապահով է, որքան և վերջինս»: Դա միակ փոփոխութիւնն է, որ Մարքսն անում է իր հանդէսի № 6-րդում, №1—3-ում գրածների նկատմամբ. Ծնացածը, իր բոլոր պատճառակցական-փաստական դիտողութիւններով, պահպանում է իր ճշգրիտ արժէքը:

Որքան յաճախ յաջողում է Մարքսին առհասարակ և և մասնաւորապէս իր այդ աշխատութեան մէջ, մի քանի սղմուած նախադասութիւններով աւելի խոր միտք ու պարզաբանուած հասկացողութիւն տալ որևէ խոշոր խնդրի մասին, քան այդ յաջողուել կարող է սովորական տաղանդներին:

«Եթէ յունիսեան ապստամբութիւնը—ասում է Մարքսը առաջին գլխի վերջում—ցամաքային Եւրոպայում ամենուրեք

բարձրացրեց բուրժուազիայի ինքնազգացումը և նրան բաց է ի բաց շաղկապեց ֆեօդալական թագաւորութեան հետ մի սերտ դաշնակցութեամբ, ի՞նչ եղաւ, այնուամենայնիւ, այդ դաշնակցութեան առաջին գոհը.—ինքը ցամաքային եւրոպայի բուրժուազիան։ Յունիսեան յեղափոխութեան վիժումը (խորտակումը) արգելեց բուրժուազիային՝ ամրացնելու իր դասակարգային տիրապետութիւնը և միւս կողմից ժողովրդին մեխեց բերդերաւան յեղափոխութեան ամենաստորին աստիճանի վրայ՝ կէս գոհունակ և կէս անմիաբան ու զայրացած վիճակի մէջ։—Յունիսեան այդ վիժումը, շարունակում է Մարքսը, մասնեց եւրոպայի բոնակալ պետութիւններին այն գաղտնիքը, որ Ֆրանսիան պէտք է բոլոր պայմաններում արտաքուստ ապահովէ իսողադութիւնը, որպէսզի կարողանայ ներքուստ առաջ վարել քաղաքացիական կռիւր։ Այսպէս այն ժողովուրդները, որոնք կուռում էին յանուն իրանց ազգային անկախութեան, գոհ գնացին Ռուսաստանի, Աւստրիայի և Պրուսիայի գերագոյն ոյժին։ Բայց միևնոյն ժամանակ այդ ազգային յեղափոխութիւնների վիճակը (ճակատագիրը) ենթարկուեց պրոլետարիատի յեղափոխական ճակատագրին (նոտրագրերը մերն են)։ Նրա ազգային յեղափոխութեան թուացող ինքնանկախութիւնը յափշտակուեց սոցիալական միջ յեղաշրջումներից։ Չեն կարող ունգարացին, լեհը, իտալացին ազատ լինել, քանի շարունակէ քանուորը ստորով մնալը։²⁸⁾

Մինչև որ արմատապէս վերջ չտրուի կապիտալիստական արդիւնաբերութեան եղանակի գոյութեան, բուրժուազիայի դասակարգային տիրապետութեան, այսինքն մինչև որ վախճանապէս չլուծուի սոցիալական հանգոյցաւոր կոնֆլիկտը, այնքան էլ չի կարող խօսք լինել ճնշում ու բռնաբարում ազգերի ու ժողովուրդների իսկական ազատութեան մասին—այդ է նշանակում Մարքսի ասածների իմաստը։

Գրքի երկրորդ գլխի մէջ Մարքսը խօսելով փետրուարեան սահմանադրութեան մասին, ասում է ի միջի այլոց հետեւեալը. «Սահմանադրութեան առաջին օրինագծի մէջ, մշակուած յունիսեան օրերից առաջ, գտնւում է մի անյաջող կէտ՝ «droit au travail»,—իրաւունք աշխատանքի վրայ, ուր ամփոփուած են պրոլետարիատի յեղափոխական պահանջները։ Դա վերածուեց droit à l'assistance—իրաւունք հասարակական խնամատարութեան վրայ. իր նորագոյն պետութիւն չէ կերակրում այս կամ այն ձևով իր պառպաններին։ Իրաւունք աշխատանքի վրայ,—

28) K. Marx, « Die Klassenkämpfe in Frankreich » էր. 41

դա բուրժուական մտքով մի անմտութիւն, մի թշուառ ու բարեպաշտ ցանկութիւն է. բայց այդ իրաւունքի յետեւ կանգնած է բռնի ոյժը կապիտալի վրայ, իսկ այդ ոյժի յետեւ կանգնած է արդիւնաբերութեան միջոցների խրացումն, այդ միջոցների հնթարկումը խմբակցուած ու միաբանած բանուոր դասակարգին, այսինքն վարձու աշխատանքի, կապիտալի և նրանց փոխադարձ յարաբերութիւնների վերացումը: 20)

Այստեղ ահա առաջին անգամ ձեւակերպւում է այն միտքը, որով նորագոյն բանուորական-սոցիալիզմը սուր ու անհամակերպելի գծերով տարբերւում է սոցիալիզմի այն բոլոր խայտարղէտ տեսակներից, որոնք են՝ ֆէօդալական, բիրգերական, մանր բիրգերական, ինչպէս և այն ուտոպիական-նախապատմական բանուորական կոմունիզմից, որ վարդապետում է ըարիքների համայնականացման շփոթ ուսմունքը: Աւելի ուշ Մարքսը արդիւնաբերութեան միջոցների հասարակականացման վրայ աւելացնում է նաեւ փոխանականութեան միջոցների հասարակականացումը, որպէս լրացումն իր առաջադրած գլխաւոր թեզիսի:

8

Բէակցիայի աղդեցութիւնը յեղափոխական-կոմունիստական շարժման վրայ — Տարածայնութիւնը կոմունիստական դաշնակցութեան մէջ և նրա պառակտումը — կոմունիստների հալածանքը Գերմանիայում — կոմունիստական պրոցեսը Քեօլնում — Մարքսի զրուածքը դրա մասին — Բեռնպարտի 18-ին Բրիւմբերը — Գասկարդային կռուի և մատերիալիստական հասկացողութեան սկզբունքը բրիւմբերի մէջ — Մարքսի մի այլ զրուածք՝ «Յեղափոխութիւնը և հակոյեղափոխութիւնը Գերմանիայում» — Անհրաժեշտ նախապայմանները — Յեղափ. Վիեննայում և Բերլինում — Մարքսի սուր կրիտիկան:

Քանի գնում, այնքան աւելի ու աւելի պարզ նկատւում էր, որ ընդհանուր եւրոպական (ցամաքային) յեղափոխական շարժումը անզօք ակիքներով զարնւում էր Բէակցիայի հզօրացող ժայռերին, պարտուած ու վհատուած յետ նահանջում: 1850 թուականի ամառուայ ընթացքում նկատւում էր այդ երևոյթը իր ուժեղ արտայայտութեամբ:

Փրանսիայում՝ ոչնչացրուեց ընդհանուր ձայնատուութեան իրաւունքը, առանց պրոլետարիատը ոտքի կանգնելու: Վճռական որոշումը մնացել էր հետամտող Լուի Բոնապարտի և միապետական-բէակցիօնէր ազգային ժողովին: Գերմանիայում

դեմօկրատական մանր քաղաքացիները ձեռքերը ծալած սպասողական վիճակի մէջ էին. լիբերալ բուրժուազիան խաբւում էր պրուսական կառավարութիւնից. ինքը Պրուսիան խաբւում էր աստորիական կառավարութիւնից, իսկ երկուսը միասին պարում էին ռուսական բռնակալութեան փշած սրինգով:

Այդպէս, հակայեղափոխական այդ ուժգին հարուածի աւերիչ ներգործութեան տակ չէին կարող ցամաքային Եւրոպայի կենտրոնական քաղաքներում պատասպարուած կոմունիստական խմբերը պահպանել իրանց գոյութիւնը: Բնագիտյուն գրեթէ ամբողջապէս խեղդուել էր կոմունիստական դաշնակցութիւնը. Ֆրանսիայում նա կատարելապէս կազմալուծուել էր. Գերմանիայի մի քանի քաղաքներում՝ Համբուրգ, Լայպցիգ, Բրեսլաւ, Բեռլին և այլն, շարունակուել էին մի քանի բանուորական ու գիւղացիական խմբակցութիւններ իրանց կիսախաբխուլ գոյութիւնը:

Ոչ որ, բացի Մարքս ու Էնգելսից, չէր կարողանում այնպիսի խորութեամբ ու ճշգրիտ նետնողութեամբ ըմբռնել քաղաքական այդ կրիտիկական դրութեան էութիւնը և բացատրել նրա առաջացման պատճառները (որի մասին խօսեցինք 7-րդ գլխում): Մարքս-Էնգելսի անողոր կարծիքը՝ որ առժամանակ րէակցիւն, հակայեղափոխութիւնը հարուածել և վերջ է դրել յեղափոխութեան գոյութեան, — դուր չէր գալիս կոմունիստներից իլլիւզիօնիստ անդամներին, որոնք չէին հրաժարուում սպասելիքներ ունենալուց՝ յեղափոխական անյոյս ապստամբութիւններից: Հին յայտնի կոմունիստներից շատերը և նոր ոյժերից աչքի ընկնողները, ի միջի այլոց Վիլհելմ Լիբկնիխտը, անպայման բաժանում էին Մարքս-Էնգելսի կարծիքները: 1850 թ. սեպտեմբերի 15-ին կենտրոնական վարչութեան ժողովում բացարձակ ընդհարում են այդ հակառակ կարծիքները: Մեծամասնութիւնը անցնում է Մարքս-Էնգելսի կողմը: Մարքսը բնորոշում է այդ երկուստեք հակառակութիւնը հետեւեալ գեղեցիկ տողերով.

«Մենադատական հայեացքի փոխարէն, փոքրամասնութիւնը առաջադրում է ղոգմատիկական հայեացք, և մատնորիալիստականի փոխարէն՝ իդէալիստական հայեացք: Փոխանակ իրական յարաբերութիւնների, նա յեղափոխութեան մղիչ անիւը համարում է սոսկ կամքը: Մինչդեռ մենք բանուորներին ասում ենք՝ դուք պէտք է 15, 20, 50 տարի շարունակ քաղաքացիական կռիւ և ժողովրդական պայքար մղէք, որպէսզի ոչ միայն փոխէք իրական յարաբերութիւնները, այլև փոխէք ինքներդ ձեզ և ընդունակ դառնաք հասնելու քաղաքա-
Մարտ, 1906.

կան տիրապետութեան. նա (հակառակորդ փոքրամասնութիւնը), ընդհակառակը, ասում է՝ կամ պէտք է մենք իսկոյն տիրապետութեան համեմատ, կամ թէ չէ հանգիստ քնենք: Մինչդեռ մենք մասնաւորապէս գերմանական բանուորներին մատնացոյց ենք անում գերմանական պրոլետարիատի անզարգացած դրութեան վրայ, իսկ նա շօյում է ամենագոնհիկ ձեռով նրանց սզգային զգացմունքը: Ինչպէս որ դեմօկրատները ժողովուրդ խօսքը դարձրել են մի սրբացրած էակ, այնպէս էլ դուք սրբացրել էք պրոլետարիատ խօսքը: Ինչպէս դեմօկրատիան, այնպէս էլ դուք, յեղափոխական զարգացումը խառնում էք յեղափոխութեան հետ:»³⁰⁾ (Նոտրդրերը մերն են):

Այս աստիճան սուր հակառակութիւնների մէջ՝ գաղափարական հողի վրայ, չէր կարող, անտարակոյս, հաշտութիւն կայանալ: Փոքրամասնութիւնը զատուում է Մարքս-էնգելսին հաւատարիմ մնացած րանակից և կուլ գնում իր անպտուղ իլլիւզաներին: Դրանից յետոյ կոմունիստական դաշնակցութեան կենտրոնական վարչութիւնը Լոնդոնից տեղափոխւում է և հաստատուում Քեօնում: Այդպէս ամբողջ բաժանւում է երկու մասի՝ Մարքս-էնգելսի փրակցիան և Վիլլիւ-Շապերի փրակցիան: Վերջինս հետզհետէ աւելի էր ստուարանում և ուժեղանում շնորհիւ այն հանգամանքի, որ շատ նորեկ երիտասարդ կոմունիստներ իրենց տաքարեւութեան և յեղափոխական ֆանտազիային գոհացում էին տալիս Վիլլիւ-Շապերի իլլիւզիօնիստ բանակի մէջ:

Սակայն կարճ ժամանակ անցած բոլորովին խաչ է դրւում առհասարակ կոմունիստական գործունէութեան վրայ, մանաւանդ Գերմանիայում: 1851 թ. մայիսի 10-ին Լոնդոնից ուղարկուած գաղտնի պատուիրակը՝ կոմունիստ Նոտինգը, ձերբակալւում է Լայպցիգում: Ոստիկանութիւնը գտնում է նրա մօտ մի քանի գաղտնի դոկումենտներ: Ի միջի այլոց և «Կոմունիստական Մանիֆեստը»: Բռնուած նամակների և մի շարք հասցէների ցուցմունքներով պրուսական կառավարութիւնն անդուլ եռանդով հետևում է ամենուրեք ամբողջ իրողութիւնը մերկացնելու համար: Քեօնում ձերբակալւում են բոլոր յայտնի կոմունիստները: Այդտեղից սկսւում է կոմունիստների յայտնի պրօցեսի պատմութիւնը Քեօնում: Պրուսական ոստիկանական կառավարութիւնը ժանդարմերիայի և դաւադիր շպիօնների մի անխնայ ցանց է պատում Փարիզում և Լոնդոնում՝

³⁰⁾ Fr Mehring «Geschichte der deutschen Sozialdemokratie» հատ. II, էր. 190.

մերկացնելու ամբողջ գաղտնիքը և իր ձեռքը ձգելու հնարաւորին չափ շատ դոկումենտներ ու «յանցապարտ» կոմունիստների Մեղադրութեամբ էին, իհարկէ, նաև Մարքսն ու Էնգելսը, և եթէ կարողանար պրոլետարիան կառավարութիւնը դուրս քաշել նրանց ազատ Անգլիայից, որոնց համար յատուկ լրտեսներ էին ուղարկուած Լոնդոն, շատ գոհ կը լինէր նա իր նենգամիտ ձեռնարկով: Պրուսիայի իւնկեր-բիւրօկրատական կառավարութեան թուում էր, թէ մի ինչոր բարձր ու խոշոր դաւադրութիւն կայ մէջ տեղը, որի իրագործման համար հիմնուել էին այդ կոմունիստական ընկերութիւնները: Այդպէս կարծելով և այդ ուղղութեամբ գործելով, Պրուսիայի դատարանական ատեանը երկար տարիների բանտարկութեան է դատապարտում ձերբակալուած կոմունիստներին: Քեռնի այդ պրոցեսը տեւում է գրեթէ մի ամբողջ տարի և վերջանում 1852 թ. նոյեմբերի 12-ին: Յաջորդ տարին Մարքսը լոյս է ընծայում (միաժամանակ Բազելում և Լոնդոնում) «*Enthüllungen über den Kölner Kommunistenprozess*» («Մերկացումներ կոմունիստների պրոցեսի մասին Քեռնում») վերնագրով մի հետաքրքրական բրօշուր, ուր սուր ու խայթող գրչով ամօթի ու խայտառակութեան պատին է մխում բռնակալ Պրուսիային:

Մարքսը կենդանի փաստերով մերկացնում է կառավարութեան նենգամտութիւնն ու խարդախութիւնը, թէ ինչպէս նա կեղծ դոկումենտներով աշխատել է ապացուցանել, որ կոմունիստական կազմակերպութիւնը երդուեալ ու դաւադիր յեղափոխականների մի ընկերութիւն է: Մինչդեռ Մարքսը դրա հակառակ պարզ պատկերացնում է մեղ կոմունիստական բունդի ֆիդիօնոմիան: Կոմունիստական կամ պրոլետարական կուսակցութիւնը չունէր որևէ այլ հնարաւորութիւն լեզալ հողի վրայ գործելու միւս բուրժուական կուսակցութիւնների նման, բայց եթէ գործելու գաղտնի կազմակերպութեամբ: Անպայման եղել են խմբեր այդ կազմակերպութեան մէջ, որոնք դիտաւորութիւն ունէին խորտակելու գոյութիւն ունեցող պետական ըէժիմը, իսկ իբրև այդպիսին, նրանք պէտք է երդուեալ յեղափոխականներ լինէին: Սակայն դա միայն մի փոքրիկ էպիզոդ պիտի կազմէր այն մեծ ու յարաճուն կուռի պրոցեսի մէջ, որի վախճանական յանգումը պիտի լինի ոչ միայն խորտակումը Ներոպայի տիրանների և դեսպոտների, այլ և ամենահզօր ու զարհուրելի ոյժի տիրապետութեան—կապիտալի տիրապետութիւնն աշխատանքի վրայ:

«1848/49 թ.—ասում է Մարքսը—յեղափոխութեան գործնական հետեւանքները ճշտեցին թէօրիայի այն դիտողութիւն-

ները, որոնք յանգում են այն հզրակցութեան, որ նախ պէտք է բուրժուական դեմոկրատիան հասնէ տիրապետութեան, նախ քան կոմունիստական բանուոր դասը սպասել կարող է, տեսապէս ոյժին տիրանալու և վարձու ստրկութեան սխտեմը խորտակելու, որ նրան ենթարկում է բուրժուազիայի լծին»³¹⁾։

1852 թ. Մարքսը լոյս է ընծայում մի այլ հետաքրքրական գրքոյկ «Der 18 Brumaire des Louis Bonaparte» («Լ. Բոնապարտի 18-ի Բրիւմերը») վերնագրով։ Այդ գրուածքը շարունակութիւնն է կազմում Մարքսի «Դասակարգային կռիւնները Ֆրանսիայում, 1848—49 թ.» աշխատութեան, որի մասին մենք խօսեցինք վերև։

«Բրիւմերը» վերաբերում է Ֆրանսիայի կարճ ժամանակեայ պատմական յեղեղուկ շրջանին, որի վերլուծուած ու փաստալից լուսաբանուած նկարագիրը տալիս է մեզ Մարքսը։ Դա ֆրարսիական յեղափոխութեան շրջանն է, սկսած 1848 թ. փետրուարի 24-ից մինչև 1851 թ. դեկտեմբեր ամիսը։ Մարքսը բաժանում է այդ ամբողջ շրջանը երեք ընդհանուր աստիճանների (ֆազերի)։ 1. Փետրուարեան աստիճան՝ 1848 թ. փետր. 24 — 4-ը մայիսի։ 2. Հանրապետութեան հիմնադրութեան կամ ազգային հիմնադիր ժողովի աստիճան, մայիսի 4-ից մինչև 1849 թ. մայիսիսի 29-ը։ 3. Սահմանադրական հանրապետութեան կամ ազգային օրէնսդիր ժողովի աստիճան, 1849 թ. մայիսի 29-ից մինչև 1851 թ. դեկտեմբերի 2-ը։

Այդ կարճամեայ շրջանում Ֆրանսիայի քաղաքական բաղդը ենթակայ էր արագընթաց փոփոխութիւնների, նայած հասարակական ոյժերի և քաղաքական ֆակտորների յարաբերութիւններին և նրանց դասաւորութեան։ Որքան յեղափոխական շրջանի առաջին աստիճանի վրայ պրոլետարիատը զրական մասնակցութիւն ունէր ժամանակաւոր կառավարութեան մէջ և ունէր իր յատուկ խօսքն ու սոցիեցութիւնը քաղաքական մեխանիզմի մէջ, այնքան նա յետ է մղւում առաջին շարքերից երկրորդ աստիճանի վրայ և տեղի տալիս բուրժուազիայի, մասնաւորապէս ֆինանսական արիստոկրատիայի բացահայտ տիրապետութեան ազգային հիմնադիր ժողովում։ Եւ որքան յեղափոխական շրջանի երկրորդ աստիճանի վրայ Ֆրանսիայի քաղաքական կամքի վրայ իշխում էր բուրժուազիան, այնքան էլ երրորդ աստիճանի վրայ Ֆրանսիայի քաղաքական ճակատագիրը դարձել էլ խաղալիք աւանտիւրիստ Լ. Բոնապարտի

³¹⁾ K. Marx, «Der Kommunistenprozess zu Köln» (տես Մարքսի «Revolution und Kontre-Revolution in Deutschland» XX գլուխ էր. 135)։

և աղբային օրէնսդիր ժողովի—այդ մոնարխիստական—բէականիօնէր մարմնի—ձեռքին:

«Կոմունիստական Մանիֆեստից» յետոյ Մարքսը իր բոլոր յետագայ գրական երկերի մէջ, ինչպէս մինք այդ տեսանք և դեռ յաջորդաբար կը տեսնենք, իրական գործադրութիւն է տալիս իր այն բոլոր թէօրիաներին և տեսական սկզբունքներին, որոնց համառօտակի ձևակերպումները տուել է նա «Մանիֆեստի» մէջ: Շատ յաճախ ենք հանդիպում մանաւանդ, նրա պատմա-փիլիսոփայական խորհրդածութիւնների մէջ, դասակարգային կոռւի ու տիրապետութեան և մատերիալիստական հսկակցողութեան սկզբունքներին: «Բրիւսելի» մէջ, օրինակ, պարզ նկատուում է Մարքսի հիմնաւորած մեծ օրէնքը պատմական շարժման և նրա կիրառումը: Այն օրէնքը—ասում է Մարքսը—որ իւրաքանչիւր պատմական կռիւ, լինի նա քաղաքական, կրօնական, փիլիսոփայական թէ մի որևէ ուրիշ իդէօլոգիական սահմանում, իրապէս կազմում է լոկ արտայայտութիւնը հասարակական դասակարգերի փոխադարձ կոռւի, և որ այդ դասակարգերի կեանքը, հետեապէս նաև նրանց միջև եղած կոնֆլիկտները (պայքար), իրանց կողմից որոշում են տնտեսական կազմի զարգացման աստիճանով, նրանց (դասակարգերի)՝ արդիւնաբերութեան մէջ, և դրանով պայմանաւորուած փոխանակութեան մէջ խաղացած դերի ընաւորութեամբ»: 32)

1851—1852 թուականին Մարքսի գրչի տակից դուրս է գալիս մի այլ ուշագրաւ աշխատութիւն: Այդ երկու տարիների ընթացքում նա «*Revolution und Kontre-Revolution in Deutschland*» («Յեղափոխութիւնն և հակայեղափոխութիւնը Գերմանիայում») վերնագրով մի շարք ընդարձակ յօդուածներ է գետնելում «*New-Yorker Tribune*» թերթի մէջ: Այդ յօդուածների սերիան առանձին գրքով հրատարակում է Մարքսի աղջիկը՝ էլեանոր Մարքս-Աւելինը, իսկ 1896 թ. անգլիերէնից փոխադրում է գերմաներէնի Կարլ Կաուցկին:

Ինչպէս Մարքսի վերջին յիշատակած երկու աշխատութիւնները (Ֆրանսիայի վերաբերեալ), այնպէս և այս մէկը (Գերմանիայի վերաբերեալ) կազմում են տեսական անալիզներով ամփոփ լուսաբանուած պատմական մեծարժէք երկեր այն յեղափոխական կարճամեայ շրջանի մասին, որ ունեցել են այդ երկու երկրները 40-ական թուականի վերջերին:

32) K. Marx, «Der 18. Brumaire des Louis Bonapartes» եր. 9, (ռուս. թարգմ.)

«Յեղափոխութիւնը և հակայեղափոխութիւնը Գերմանիայում» վերնագրով գրքի մէջ Մարքսը յաջորդաբար և ըննադատական շեշտումներով թւում է այն թէ՛ յեղափոխութեան և թէ՛ հակայեղափոխութեան, ընկերային յաղթական անհրաժեշտ նախապայմանները Գերմանիայում և Աւստրիայում այն հատարական կազմը և մանաւանդ դասակարգային յարաբերութիւնները, որ գտնուում էին այդ երկու երկրներում յեղափոխութիւնից առաջ, նրա ընթացքում՝ և վերջում՝ Արդիւնաբերական միջոցների և դրանցով պայմանաւորուած տնտեսական Ֆակտորների թող զարգացումը ժամանակակից Գերմանիայում և նրա հետ միացած Աւստրիայում, չուժեղացրին և չյեղափոխականացրին տեղական բուրժուազիային—բիրգերական երրորդ դասին—այն աստիճանը, որ նա խաղար մօտաւորապէս այն դերը, ինչպիսին խաղացել է Ֆրանսիական որակով բարձր կանգնած բուրժուազիան։ Միւս կողմից Գերմանիայի անդամահատումը՝ մանր-մունր միապետութիւնների, մեծ խոչնդոտ է դարձել՝ Փարիզի և Լոնդոնի նման խոշոր կենտրոններ ստեղծելու, ուր միայն բարակում է ամբողջ երկրի քաղաքական կեանքի սիրտը և ուր միայն վճռական արժէք ու նշանակութիւն ունի յեղափոխական այս կամ այն ակտը իր դրական թէ՛ բացասական հետեանքներով։

Բերլինն ու Վիեննան էին կենտրոնական և յեղափոխութեան ընթացք տուող քաղաքները։

Եւ մինչդեռ Վիեննայում մարտի 13-ի (1848 թ.) յեղափոխական ապստամբութեան ժամանակ տեղական բուրժուազիան—բացառութեամբ ֆինանսական արխիտոկրատիայի՝ բանկիրների և բօրսայի սպեկուլանտների—ձեռք ձեռքի տուած մանր քաղաքացիութեան և բանուոր դասակարգի հետ կուում էր միապետութեան դէմ, Բերլինում չկատարուեց մարտի 18-ի յեղափոխութիւնը նոյն կերպ։

Փարիզի փետրուարեան յեղափոխութիւնն սարսափեցրեց Պրուսիայի բուրժուազիային։ Այդտեղ կործանուել էր կառավարութեան այն ձևը, որ ուզում էր պրուսական բուրժուազիան հիմնել իր սեփական երկրում։ Փարիզի բանուորութիւնը յայտարարել էր բուրժուական ըէժիմի խորտակումն և բանուորի էմանսիպացիան (ազատագրութիւնը)։ Բերլինի բանուորութիւնը եւ կարող էր նոյն խաղը խաղալ բուրժուազիայի դէմքին. և թէև վերջինս շատ լաւ զգում էր, որ ինքը առանց բանուորութեան դրական աջակցութեան մեն-մենակ ոչինչ չի կարող, այնուամենայնիւ պակասում էր նրա մէջ դասակարգային արիութիւնը, նա երկիւղ ունէր պրոլետարիատից, ուստի և նա

ինքը դառնանեց իրան, երբ օգնեց կառավարութեան գաւառներում շարժումը դադարեցնելու համար և աշխատեց Բեռլինում հանգստութիւն վերականգնել, հինգ օր պալատի շուրջը խնուած բազմութեան խաղաղացնել, տուն ուղարկել:

Մարքսը սուր, խայթող գրչով և արգարացի պաթոսով քննադատում է յեղափոխութիւնից յետոյ Ֆրանկֆուրտ գումարուած ամրոց Ֆերմանիայի ազգային ժողովը իր բոլոր ըէակցիօնէր որոշումներով: «Ազգային ժողովը—ասում է Մարքսը—պէտք է ներկայանար որպէս միակ օրինական արտայայտութիւնը գերմանական ժողովրդի սուվերէն (գերիշխան) կամքի և դրանով իր որոշումներին օրինական ոյժ տար: Նա պէտք է ամենից առաջ մի կազմակերպուած ու զինուած ոյժ ունենար իր տրամադրութեան տակ, որպէս զի կարեւոր դէպքում կառավարութիւնների դիմադրութիւնը ճնշել կարողանար: Սակայն դա աւելի քան շատ է պահանջել մի ժողովից, որի մեծամասնութիւնը բաղկացած էր լիբերալ փաստաբաններից և պրոֆեսորներից. մի ժողովից, որ իրաւ յաւակնութիւն ունէր իր մէջ մարմնացնելու գերմանական ոգու և գիտութեան լրիւ ու կենդանի արտայայտութիւնը, որը, սակայն, իրապէս ուրիշ ոչինչ չէր, բայց թէ մի կոմիկական խաղ, ուր հին, վերակեաց քաղաքական բնաւորութիւններն ի ցոյց էին դրել իրանց մտածողութեան ու գործնէութեան անընդունակութիւնը: Պառաւ կանանցից բաղկացած այդ ժողովը իր գոյութեան առաջին օրից սկսած աւելի շատ էր երկիւղ կրում ամենաջնջին ժողովրդական շարժումից, քան թէ գերմանական բոլոր կառավարութիւնների երգուեալ ըէակցիայից...»³³⁾

Այնուհետեւ Մարքսը կանգ է առնում հոկտեմբերեան յեղափոխութեան վրայ՝ Վիեննայում, ասպտամբական փորձերի վրայ Ֆերմանիայի զանազան մասերում: Մարքսը խիստ յարձակողական տոնով է խօսում Աւստրիայի ոյաւօնների (բացառութեամբ լիսերի), մանաւանդ չեխերի, կրօտների մասին: Այդ պանսլաւօնիստ յետադէմ տարրերը, որոնք իրանց թշուառ գոյութեան ապաւէնը որոնում են ռուսական կնուտի հովանիսը ներքոյ, եղան ամենամեծ զարկ տուողներից մէկը հոկտեմբերեան յեղափոխութեան անաշոյ վախճանի, Վիեննայի անկման նոյեմբերի մէկին. զինուած ժողովրդի դէմ կուռում էր կայսրին հաւատարիմ մնացած չեխ զօրքն ու զօրավարը:

Մարքսը քննադատելով յեղափոխականների, մանաւանդ ազգային ժողովի սխալ տակտիկան, բնորոշում է ասպտամբու-

33) K. Marx, «Revolution und Kontre-Revolution in Deutschland» էր. 53.

Թեան տեսական հիմքերը և նրա գործական հետևութիւնները հետեւեալ կլասիք խօսքերով. «Ապստամբութիւնը մի.արուեստ է, ինչպէս պատերազմը և միւս արուեստները, և ենթակայ է որոշ կանոնների, որոնց անուշադիր թողնելն առաջնորդում է կուսակցութեան դէպի կործանում: Այդ կանոնները, որպէս տրամաբանական հետևութիւններ՝ բղխած կուսակցութիւնների և նրանց յարաբերութիւնների էութիւնից, այնքան պարզ ու հասարակ են, որ 1848 թ. կարճ ժամանակեայ փորձառութիւնը գերմանացիներին բաւական ծանօթացրել է դրանց հետ: Նախ չպէտք է երբէք խաղալ ապստամբութեան հետ, եթէ հաշուի չեն առնուած այդ խաղի բոլոր հետեւանքները: Ապստամբութիւնը մի հաշուէտութիւն է վերին աստիճանին անորոշ մեծութիւնների հետ, որոնց արժէքը կարող է իւրաքանչիւր օր փոխուել. կոուլի այն ոյժերը, որոնց դէմ պէտք է մաքաւել, իրանց կողմն ունեն կազմակերպութեան, դիպցիպլինայի և աւանդական հեղինակութեան բոլոր օգտակար կողմերը. հանդէս չընեի դրանց դէմ մեծ հակառակ ոյժեր, նշանակում է պարտուել ու ոչնչանալ: Երկրորդ, եթէ մի անգամ ընդ միշտ սկըսուել է ապստամբութիւնը, ապա պէտք է գործել ամենայն վճռականութեամբ և յարձակողական դիրքով: Յետ նահանջումը մահ է նշանակում իւրաքանչիւր զինուած ապստամբութեան համար. վերջինս կը տապալուի նախքան իր ոյժերը չափելութեամբ հետ: Պէտք է յանկարծակի վրայ յարձակուել, քանի հակառակորդի գնդերը ցրուած են, պէտք է օրէցօր, թէև փոքր, յաջողութիւններ ձեռք բերել. պէտք է ամուր բռնել բարոյական գերազանցութեան դիրքը, որ կը բերէ առաջին հետևողից ապստամբութիւնը. պէտք է գրաւել այն տատանուող սրտերը, որոնք հետևում են ամենաուժեղ մղումին. պէտք է բռնադատել թշնամուն յետ նահանջելու, նախ քան իր ոյժերը ի մի համախմբելու. կարճ ասած Դանտոնի—մինչև օրս յեղափոխական տակտիկայի ամենամեծ վարպետի—խօսքերի համաձայն de l'audace, de l'audace, encore de l'audace:—Համարձակութիւն, համարձակութիւն և դարձեալ համարձակութիւն:»³¹⁾

Թէ ըէալ բաւարար ոյժերից և թէ յեղափոխական խելահասութիւնից հեռու էր գերմանական դեմօկրատիան, որպէս զի կարողանար այդ տակտիկայի թէկուզ հեռաւոր նմանութեամբ գործէր:

24) K. Marx, Ibid եր. 117—118

9.

Էմիգրանտները և մամուլագրապէս Մարքս-Էնգելսի կարծիքը յեղափոխութեան մասին:—Մարքսի ծանր վիճակը պանդխտութեան մէջ:—Մարքսի աշխատակցութիւնը չարտիստական և ամերիկական թերթերում. նրա քսան տարուայ հրապարակախօսութիւնը «Tribune»-ի մէջ:—Մարքսի կարծիքը Թիւրքիայի մասին:—Մարքսի կոսթինետային զբաղմունքները:—Մարքսն ու Էնգելսը իրարից բաժանուած:—Մարքսի ընկերական շրջանը Լոնդոնում:

Յիսունական թուականների սարսափելի ըէակցիան միանգամայն անհնարին է դարձնում կոմունիստական պրոպագանդան ու յեղափոխական գործունէութիւնը ցամաքային Եւրոպայում: Բոլոր կոմունիստական ընկերութիւնները կազմալուծուել, յեղափոխականները տարագրուել էին գէպի Անգել-սաքսոնների հայրենիքը Նոյնիսկ այնպիսի երկրից, ինչպիսին Շվէյցարիան է: Նոյնիսկ գրաւոր պրոպագանդան անհնարին էր: Անտանելի էր հալածուած էմիգրանտների վիճակը: Տարագիր կոմունիստներն ու յեղափոխականները, սակայն, դեռ չէին յուսահատուել. նրանք երազում էին արժատական յեղափոխութեան մօտալուտ գալուստը, առանց պարզ հաշիւ տալու իրանց այդ երազների իրականացման հնարաւորութեան մասին:

Այլ կերպ էին մտածում Մարքսն ու Էնգելսը: Նրանք ոչ յուսահատում և ոչ իլլուզիաներով մաշում էին իրանց ուղիղը: Նրանք լինելով ըէակիստներ և առաջին կարգի պատմական մատերիալիստներ, ըննում էին տրուած իրն ու դրութիւնը իրանց ըէալ, շօշափելի յարաբերութիւնների մէջ: Նրանք գիտէին, որ պաժութիւնը առաջնապէս չի որոշում մարդկանց դիտատրութիւններով, այլ տնտեսական յարաբերութիւններով: Այդ տեսակէտից Մարքսն ու Էնգելսը մի կողմից ուսումնասիրեցին ժամանակակից յեղափոխական շարժման անաշուտութեան պատճառները, իսկ միւս կողմից տնտեսական ֆակտորների դրութիւնն ու յարաբերութիւններն և եկան այն պարզ եզրակացութեան, որ սկսուած և արդէն որոշ ընթացք ունեցած յեղափոխութեան շրջանը փակուած է. այլեւ չկայ հաւանականութիւն նրա նորից բռնկման մինչև աննախատեսելի ապագայ:

«Մենք գիտենք այսօր,—ասում է Կաուցկին,—որ Մարքսն ու Էնգելսն իրաւացի են հղել: Բայց դառն ճշմարտութիւններ խոստովանելը ամեն մէկի բանը չէ: Նրանք բոլորը, որոնք կարծում էին այն ժամանակ, որ յեղափոխութեան համար ուրիշ ոչինչ կարիք չկայ, բայց եթէ մի փոքրիկ կտոր բարի կամք.

նրանք բոլորը, որոնք կարծում էին, թէ կարելի է յեղափոխութիւն առաջ բերել ըստ հաճոյքի, եթէ կայ դրա համար ցանկութիւն, մի խօսքով. Անգլիա ապաստանած յեղափոխական փախտականների խիստ մեծագոյն մասը, որոնք ներկայանում էին այն ժամանակ բիւրգերական արժատական բանակը ընդդէմ Եւրոպական բէակցիայի, ոչ միայն չբաժանեցին Մարքս-էնգելսի կտրծիքը, այլև թշնամացան, հակառակեցին մեծ կոմունիստներին:»³⁵)

Բոլոր տարագրուած էմիգրանտներից ամենաւժանր ու դառնալից վիճակը բաժին է ընկնում կարլ Մարքսին, իբրև բէակցիայի ամենավտանգաւոր ու մահացու թշնամուն: Ոչ միայն Համբուրգ հրատարակուող «Neue Rheinische Zeitung» հանդէսը կորցնում է իր ընթերցողների շրջանը Գերմանիայում, այլև նրա դադարումից յետոյ բացարձակապէս անկարելի է դառնում Մարքսի, ինչպէս և էնգելսի, համար մի տող դրել իրանց հայրենիքում: Նրա առաջ փակում են բոլոր տպարանատէրերն ու գրավաճառները իրանց դռները. նոյն իսկ ամենաարժատական հրատարակիչները խորշում ու երկիւղ էին կրում Մարքսի գրածներից: Բէակցիան կատարեալ էր, մինչ իր ամենաբարձրը աստիճանը:

Մարքսը իր ոչ ոսկաւանդամ ընտանիքով, դատապարտւում է ամենավատ նիւթական վիճակի: Մի կողմից պարապելու, ուսումնասիրելու անյազ տենչը, միւս կողմից իր հայրենիքի արգելադրութ պայմանները, իսկ երրորդ կողմից տնտեսական չքաւոր դրութիւնը—այս երրակի ծանր պարագաների մէջ միայն երկաթէ մարդը կարող էր յաղթահարել բոլոր երկրորդական թէ գլխաւոր խոչնդոտներին և անձնուրացութեան չափ նուիրուել փայփայած գաղափարի յաղթանակին: Մարքսը ունէր այդ երկաթէ բնաւորութիւնը, և եթէ եղել է մէկը պատմական հերոսներից, որ ամենայն հարազատութեամբ հետևել է Դանտէի դեկլին—հետևի՛ր ճանապարհիդ և թող մարդիկ խօսեն, ինչ ուղղում են—դա եղել է Մարքսը, անհողդողդ, ժայռամուր Մարքսը:

Մարքսը հարկադրուած էր իր նիւթական միջոցները հայթհայթելու օտարազգի թերթերին աշխատակցելով: Նա եռանդով աշխատակցում է չարտիստական թերթերին, որոնք դեռ շարունակում էին իրանց գոյութիւնը, չնայելով որ չարտիգմը ընկել էր 48 թուականին: Մարքսը սուր ոճով պարսաւում

35) K. Kautsky, «Friedrich Engels» էր, 19

է լօրդ Պալմերստոնին, նրա ցարիզմին ցոյց տուած սիրալիր ծառայութիւններէ համար:

Եթէ Մարքսը կարելիութիւն չունէր անմիջապէս մատչել ինչեւէ գերմանական ընթերցող հասարակութեան, եթէ գերմանական դիմօկրատիան ընդկոտ էր հրատարակել նրա դէմ, իսկ գերմանական մամուլը փակել էր իր էջերը նրա առաջ. եթէ Մարքսը, ասում ենք, 50-ական թուականներից սկսած մինչև սոցիալիստական օրգանների երևան գալը Գերմանիայում, ոչինչ չէ հրատարակել գերմանական թերթերում, բացի Բրեսլաւում լոյս տեսնող «Neue Oderzeitung» թերթում գետեդուած (1855 թ.) մի քանի թղթակցութիւններից, ապա նոյնքան ազատ էին նրա առաջ անգեկ-սաքսերի օրգանների էջերը:

Յիսունական թուականներից սկսած մինչև Ամերիկայի քաղաքացիական կռիւը, գրեթէ քսան տարի շարունակ, Մարքսը աշխատակցում է «New York Tribune» ամերիկական յայտնի թերթին և դառնում նրա Եւրոպական խմբագիրը: «Tribune» օրգանը այսօր մի հասարակ բուրժուական թերթ է, մինչդեռ սկզբներում նա այն աստիճան արմատական—դեմօկրատական ուղղութիւն ունէր, որ նոյն իսկ Մարքսի նման մարդու մտաւոր արտադրութիւններն էր հիւրնկալում իր էջերում: «Սոցիալ-դեմօկրատիան», մեզնից ամեն մէկը՝ ով գիտէ գնահատել Մարքսի հանճարը, նա պարտական է և ամեն առիթ ունի շնորհակալութեամբ յիշելու այն մարդուն—«Tribune» թերթի շէֆ խմբագիր Չարլս Դանային,—որ պահպանել և նիւթապէս ապահովել է այդ հանճարին ամենադառն ըրպէսներին, որ էմիգրացիայի այդ սարսափելի ճգնաժամին միջոց է տուել Մարքսին ոչ միայն իր ապրուստը հոգալու, ոչ միայն գործնէութեան մի նոր ասպարէզ գտնելու, այլ և ստեղծագործելու մի աշխատութիւն, որ այսօր կազմում է գերմանական հոգու ամենափառահեղ ու խորագնին արդիւնքներից մէկը»—իբրև մամբ նկատում է Կ. Կաուցկին³⁶⁾:

Կ. Մարքսի ամբողջ քսան տարուայ հրապարակասական գործնէութիւնն արտայայտւում է «New-York Tribune» օրգանի էջերում, ուր նա հրատարակում է բազմաթիւ սոցիալ-քաղաքական և տնտեսական բնաւորութեամբ յօդուածներ: «Յեղափոխութիւնն և հակայեղափոխութիւնը Գերմանիայում» գիրքը, որի մասին մենք խօսեցինք վերև, մաս-մաս հրատարակւում է

³⁶⁾ K. Kautsky «Vorrede» եր. XX (տես «Revol. und Kontre-Revol. in Deutschl.» Մարքսի):

այդ օրգանի մէջ: Այստեղ յիշենք նաև Մարքսի կարծիքը թիւրքիայի մասին, որ նա մի մեծ յօդուածի մէջ արտայայտել է Նրիմի պատերազմի առթիւ:

«Թիւրքիան—ասում Մարքսը—կազմում է լեզիտիմիստ եւրոպայի մի վերաւոր կէտը: Լեզիտիմիստ և միապետական կառավարութեան սիստեմի անընդունակութիւնը՝ սկսած Ֆրանսիական առաջին յեղափոխութիւնից, արտայայտուել է մի նախադասութեան մէջ՝ «ուղիղ և անխաղտ պահել՝ Status quo-ն»: Այդ ընդհանուր համաձայնութեան մէջ—այն է թողնել իրերը այնպէս, ինչպէս նրանք որևէ պատահականութեամբ առաջացել են—կայանում է տիրապետող պետական ոյժերի անզօրութեան և աղքատութեան այն սպացոյցը, որ նրանք կատարելապէս անընդունակ են զարկ տալու յառաջադիմութեան և քաղաքակրթութեան»: «Թիւրքիան փտում է—ասում է Մարքսը յօդուածի մի այլ մասում—և պիտի շարունակէ դեռ իր փտածութիւնը քանի գոյութիւն ունի «եւրոպական հաւասարակշռութեան» ներկայ սիստեմը և status-quo-ի անխաղտ դիրքը, և հակառակ բոլոր կոնգրեսներին, արձանագրութիւններին և ուլտիմատումներին, նա պիտի իր ամեն տարուայ բաժինն ունենայ դիպլոմատիական կնճռոտ դժուարութիւններին և միջազգային յուզող փոթորիկների մէջ»: 37)

Մարքսի 50-ական թուականներին արտայայտած այս նախատեսումը պահպանել է աւելի քան կէս դար շարունակ իր բոլոր թարմութիւնն ու այժմէութեան արժէքը:

Մարքսի այդ շրջանի ամբողջ հրապարակախօսութիւնը՝ ամերիկական թերթում, չունի, անպայման, այն մեծ արժէքը, ինչպէս նա ունեցել է իր իսկական հրապարակախօսական կոչման շրջանում, երբ խմբագրում էր «Neue Rheinische Zeitung»-ը: Լոնդոնում 50-ական թուականներից սկսած մինչև «խնտերնացիօնալի» հիմնադրութիւնը Մարքսը աւելի մասնագէտ գիտնական էր, կարիքների գործիչ, քան հրապարակի մարդ: Մինչդեռ Քիօնում նրա մէջ եռում էր հրապարակական գրաւոր թէ բանաւոր գործնէութեան ջիղը:

Անգլիայում—տեխնիքական յեղաշրջումների և կապիտալիզմի զարգացման կլասիք միջնավայրում, այնտեղ, ուր կապիտալիստական տնտեսութիւնն առաջին անգամ վերածուեց գիտական սիստեմների և հիմք դրուեց տնտեսագիտութեան կլասիք դպրոցին,—այդ նոյն Անգլիայում Մարքսն իր ժամա-

37) K- Marx, «Die Nationalitäten in der Türkei beim Beginn des Krimkrieges» (տես «Neue Zeit.» XV տարի եր. 69—70)

նակի մեծագոյն մասը նուիրել է տնտեսական ձևերի և տնտեսական գիտութիւնների ճշգրիտ ուսումնասիրութեան: Լոնդոնի զրադարան-մուզէումի անրաժան այցելուն էր Մարքսը: Եւ եթէ մի կողմից գերմանական ընդհանուր ընկերային զրկել էր Մարքսին որեւէ հնարաւորութիւնից տաք մասնակցութիւն ունենալու Գերմանիայի քաղաքական-հասարակական ընթացիկ կեանքին և առհասարակ գերմաներէն արտայայտուելու, ապա անուրանալի է, որ այդ հանգամանքը միւս կողմից նպաստել է Մարքսի ակադեմիական ինտենզիւ զբաղմունքներին. այսինքն հրապարակի մարտնչող գինուորը դառնում է կարինետի խորագինին գիտնական:

Այդ ժամանակ Մարքսն ու էնգելսը միմիանցից բաժանուած էին ապրում: 50-70-ական թուականներն էնգելսն ապրում էր Մանչեստրում, վարելով այնտեղ իր հօր առևտրական գործերը. նշանակում է գրեթէ ամբողջ քսան տարի նրանք միմիմիցից բաժանուած էին: Սակայն և այնպէս չէր խզուած միմիմիցից բաժանուած էին: Սակայն և այնպէս չէր խզուած նրանց մտաւոր կապը: Նրանք անդադար նամակագրութեան մէջ էին. ժամանակակից տնտեսական, գիտական և քաղաքական կեանքն ու խնդիրներն էին նրանց շարունակ զբաղեցնում: Եւ այն ժամանակամիջոցում, երբ մեծ մտածողներից աւագ ընկերը ցամաքային եւրոպայի աղմկայոյզ շարժումների անմիջական մասնակցութիւնից հեռացած՝ Լոնդոնում մտաւոր ինտենզիւ աշխատանքով էր զբաղուած, որի արդիւնքն եղաւ այն նսկայ երկունքը, որ տնտեսական գիտութիւնների մէջ նմանը չտեսնուած դարագլուխ կազմեց: Նոյն ժամանակամիջոցում կրտսեր ընկերը, նստած Մանչեստրում, ամենևին չէր կլանուել առևտրական գործերով: Դրանք միշտ երկրորդական տեղ են զբաղել էնգելսի համար: Նոյն տարիներում էնգելսը եռանդով ուսումնասիրում էր պատերազմի պատմութիւնը, ռուզմուկան գիտութիւնները, ապա համեմատական լեզուաբանութիւն՝ որ վաղուց ի վեր նրա սիրած գիտութիւնն է եղել, և տնտեսական ու բնական գիտութիւններ:

Մարքսի կարինետային զբաղմունքները չէին խանգարում ամենևին, որ նա կենդանի յարաբերութեան մէջ մտնէր տեղական յայտնի անձնաւորութիւնների հետ: Օտար երկրներից, մանաւանդ Գերմանիայից, Անգլիա ապաստանող շատ կոմունիստների և յեղափոխականների մշտական այցելատունն եղել է Մարքսի բնակարանը, և բոլորի խորհրդատուն՝ ինքը Մարքսը:

Այնպիսի յայտնի անձնաւորութիւններ, ինչպէս են Անգլիայի բանուորական շարժման ականաւոր ներկայացուցիչները՝

Իւլիան Հարնայ, Էրնստ Զոնս—քայքայուած չարտիզմի վերջին շառաւիղները, ապա ծերունի Բոքերդ Օվենը, ուստոյիստական սոցիալիզմի ամենասարամիտ ու գործնական ներկայացուցիչը —դրանք և նման շատ մարդիկ կազմում էին Մարքսի ընկերական մտերիմ շրջանի անբաժանելի անդամները։ Ամենահետաքրքրական ծանօթութիւնը, սակայն, որ Մարքսն ունեցաւ Լոնդոնում, դա Դաւիթ Ուրքարտի հետ էր։ Այդ նշանաւոր քաղաքագէտը բացառակի մարդն էր, որ այնքան խոր ծանօթութիւն և նուրբ հասկացողութիւն ունէր ռուսական դիպլոմատիայի և «Արևելեան հարցի» մասին։ Մի հեղինակութիւն առաջին կարգի—ասում է Լիբկնեխտը—նոյն իսկ ամենաբարձր հեղինակութիւնը, որի իւրաքանչիւր ասածն ու գրածը Ռուսաստանի և Թիւրքիայի մասին ունէր իր խոշոր արժէքը։ Ուրքարտը մի դիպլոմատիական տաղանդ էր, որ քայլ առ քայլ հետևում էր Ռուսաստանի քաղաքականութեան մերձաւոր Արևելքում։ Ուրքարտի շնորհիւ մենք (Մարքսի ընկերական շրջանին է վերաբերում խօսքը Բ. Ի.) դիպլոմատիական խընդիրների բոմանտիկական հասկացողութիւնից անցանք բէալիստական հասկացողութեան սահմանը։ Եւ ինչ որ ես—աւելացնում է Լիբկնեխտը—մեր կուսակցական մամուլի և գրականութեան մէջ, ապա բայխստագում ասել ու գործել եմ գերմանական դիպլոմատիայի և ռուսական աւարառու նուաճողական քաղաքականութեան դէմ, դրանով ես ամենից առաջ պարտական եմ Ուրքարտին և նրա գրուածքներին»³⁸⁾։

Ուրքարտի միջոցով է նաև, որ Մարքսը մօտ ծանօթանում է «Արևելեան ինդի» և ռուսական քաղաքականութեան հետ և Ղրիմի պատերազմից առաջ «New York Tribune» թերթի մէջ ընդարձակ ու լուսարանուած յօդուած է գրում Թիւրքիայի բոլոր ժողովուրդների, իրա՝ Թիւրքիայի, և միջազգային քաղաքականութեան մասին, որից մենք իբրև նմուշ մի քանի կէտեր յիշատակեցինք վերև։

Բ. Իշխանեան

(Կը շարունակուի)

38) W. Liebknecht. «Karl Marx zum Gedächtniss» էր. 56—57.